ներծծվում է նրա լավային ծածկի տակ և նորից աշխարհ է տեսնում այնտեղ, որտեղ լավաների հաստ շերտը խորը պատռված է։ Դարերի ընթացքում Գորիսի գետակը քանդել սրբել է սարահարթի փխրուն ապառները և երկարավուն ձվաձև հովտանման իջվածքով բաժանել է նրան իր բնական շարունակությունից՝ Տեղի սարահարթից։ Անգեղակոթ գյուղից ներքև Որոտանը (Բազարչայը) սկսում է խորանալ իր տաշտի մեջ և Տաթևի տակ մտնում է ուղղաձիգ պատերով սեղմված կիրճը, որի աջ և ձախ կողմերից պոկ եկած քարաբեկորներն իրար գալով՝ կազմել են բնական կամուրջ՝ Սատանի կամուրջ։ Աջ ափին բխող հանքային ջրերը իրենց աղերով միաձուլել են քարերի այդ կամարը մոտ 50 մետր լայնությամբ և կամրջի տակ կախ են տվել ստալակտիտներ։ Անհիշատակ ժամանակներից այդ միակ կամուրջովն է, որ երթևեկողները փոխադրվել են Որոտան գետի մեկ ափից մյուսը։

Անգեղակոթի տակից սկսած այսօր պարզ երևում է գետի ձախ ափով հին տաշտի թողած տեռասը։ Գետը հասնելիս է եղել ավելի հյուսիսով և նրա կազմած տեռասը ձգվում է Շաքի գյուղի մոտայքից գրեթե մինչև Սատանի կամուրջը։ Աղբյուրները արտահոսում են սարահարթի տակից այդ տեռասի վրա, որը հետզհետե բարձրանում է գետի այժմյան հոսանքից ավելի և ավելի վեր։ Մի հորդ աղբյուր դուրս է պրծնում լավային շերտի տակից Սիսիանում հենց Շաքի գյուղի մոտ և կազմում մի այնպիսի ջրաշատ ջրվեժ, որ այս վերջին տարիներում նրա անկման ուժը գործադրվում է այստեղ հաստատված էլեկտրակայանի անիվները պտտեցնելու և շրջակա բնակավայրերին լույս և էներգիա տալու համար։ Ավելի արևելք այժմյան Սիսիանը (նախկին Ղարաքիլիսան-Սիսավանը) Վաղարշապատի Հռիփսիմեի տիպի իր հին տաճարով ծվարած է այդ տեռասի վրա մի շարք հորդաբուխ աղբյուրների մոտ՝ հին ափի պատնեշով Եռաբլուրի (Ուչթափալարի) քամիներից պաշտպանված։ Ավելի ներքև նույն տեռասի վրա մի լեռնային վտակ ներկայացնող աղբյուրների ակունքների մոտ զետեղված են Աղուդին իր գեղեցիկ հին մահարձանով և Վաղուդին իր դիմացի Որոտնա վանքով։ Այսպես է շարունակվում մինչև Յայջի գյուղը։ Բոլորն էլ ընդհուպ կպած են հին տաշտի բարձր եզրին՝ մտնելով նրա հովանու տակ՝ քամիներից ազատ մնալու համար։ Հին ճանապարհը անցնելիս է եղել այդ տեռասի վրայով։ Այժմյան խճուղին Սիսիանի (Բիչանաղի) լեռնանցքից իջնելով և Մելիք-Թանգու վերին կամրջի վրայով տեղափոխվելով գետի ձախ ափն՝ ուղղվում է Եռաբլուրի սարահարթի տափակ մակերեսով։ Ուղևորը չի կասկածում, որ խճուղուց մեկ-մեկուկես կիլոմետր հարավում հարթությունը կրկնակի հատվում է՝ կազմելով նախ մի լայն տեռաս, մյուս անգամ Որոտան գետի խոր տաշտը։

Մոտենալով Գորիսին՝ սարահարթի ապառները դառնում են ավելի փրխրուն։ Լավային շերտի տակից բխող ջրերը հեշտությամբ խորացնելով իրենց հունը, փորել են խոր-խոր ու երկար ձորեր, սրանցից Գորիսինը նաև շատ լայն է։ Այնտեղ, որտեղ կոնգլոմերատները դեռ ամբողջովին չեն մաշվել ջրի և քամու գործունեությունից, կանգնած են՝ հողմնահարությունից քմահաճ ձևեր ընդունած խումբ-խումբ և առանձին դասավորված քարաբուրգեր, որոնք Բուն Զանգեզուրին տալիս են առանձնահատուկ գեղեցկություն և գրավչություն։ Մեկ-մեկ այդ բուրգերի գլխին պահպանվել է նախկին սարահարթի վրա պառկած մեծ պալը (քարաբեկորը—валун.), որի տակ հողը, ենթարկվելով հող-